ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված գործակարգավարական խորհրդակցության

12.01.2026թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր մարզպետ Ա.Մկրտչյանը.
Մասնակցում էին
Ա.Ղարիբյանը -մարզպետի տեղակալ
Մ.Դալլաքյանը - գլխավոր քարտուղար
Լ.Աբրահամյանը - մարզպետի խորհրդական
Հ.Ադամյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Կ.Ադամյանը, Ա.Շիրինյանը, Ռ.Պողոսյանը, Ա.Երիցյանը, Ռ.Մարգարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Լ.Մաթոսյանը, Է.Հախվերդյանը, Ա.Բեջանյանը, Ա.Մալոյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. **Նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություն**

/զեկուցող Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ/

2. **Այլ հարցեր**:

Ելույթ ունեցավ ՀՀ Լոռու մարզպետ Ա.Մկրտչյանը, շնորհավորեց մարզպետի աշխատակազմի աշխատակիցներին Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ, ինչպես նաև ներկայացրեց նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ տեղեկատվություն:

Լոռու մարզպետը հանձնարարեց.

1. **Լոռու մարզպետի տեղակալ Ա.Ղարիբյանին, աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝**

Ուսումնասիրել և ներկայացնել ամբողջական տեղեկատվություն Լոռու մարզում իրականացվող խնդրահարույց շինարարական աշխատանքների և օբյեկտների վերաբերյալ:

2. **Լոռու մարզպետի գլխավոր քարտուղար Մ.Դալլաքյանին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝**

Ամփոփել 2025թ. ընթացքում ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքները՝ ըստ ոլորտների և ներկայացնել տեղեկատվություն:

3. **Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Մ.Դալլաքյանին՝**

Ուսումնասիրել ՀՀ Վարչապետի կողմից նախորդ ժամանակաշրջանում տրված

հանձնարարականները և ներկայացնել առաջարկություններ դրանց վերջնական և ամբողջական կատարման վերաբերյալ:

4. **Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝**

Յուրաքանչյուր ուրբաթ՝ մինչև ժամը 15.00 մարզպետին ներկայացնել տեղեկատվություն
ստորաբաժանման կողմից շաբաթվա ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ:

5. **Լոռու մարզպետի խորհրդական Լ.Աբրահամյանին, մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ Ա.Մալոյանին՝**

Համայնքներում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի հայտերը նախապես ուսումնասիրել, անհրաժեշտության դեպքում դրանց վերաբերյալ հարցումներ և ուսումնասիրություններ կատարել համայնքներում՝ համագործակցելով մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանի հետ և ներկայացնել առաջարկություններ:

X

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԿՐՏՉՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99